ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

30 մարտի 2026 թվականի քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետեւյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Ա.Ա. Դրոնովի,

զեկուցող դատավոր՝ Ա.Բ. Կիշկեմբաեւի,

դատավորներ՝ Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Կ.Կ. Ջունուշպաեւի, Ա.Ա. Զաբարայի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

դատական նիստի քարտուղար՝ Ա.Բ. Ալպիսբայի,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-47-րդ, 68-69-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է հետեւյալ խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները պարզաբանելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի համաձայն։

I. Դիմողի հարցերը

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) եւ Պայմանագրի թիվ 19 հավելվածը հանդիսացող՝ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) այն դրույթների պարզաբանման դիմումով, որոնք վերաբերում են Հանձնաժողովի՝ սեփական նախաձեռնությամբ մրցակցության վիճակի գնահատում անցկացնելիս անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հարցում կատարելու, ինչպես նաեւ Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան՝ այդ պահանջները չկատարելու համար իրավաբանական եւ ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելու լիազորություններին։

2. Դիմողը նշում է, որ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովն իրականացնում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), ինչպես նաեւ անդամ պետությունների՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի XVIII բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումը, եթե այդպիսի խախտումներն ունեն կամ կարող են բացասական ազդեցություն ունենալ երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ բացառությամբ ֆինանսական շուկաների։ Նույնանման նորմ ամրագրված է Արձանագրության 9-րդ կետում։ Այսպիսով, Հանձնաժողովն օժտված է բացառիկ իրավասությամբ՝ անդրսահմանային շուկաներում (բացառությամբ ֆինանսական շուկաների) մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման

հարցերով, որը նրան է փոխանցվել անդամ պետությունների կողմից եւ ամրագրվել է Պայմանագրում։ Ընդ որում, Հանձնաժողովը մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման լիազորություններն իրականացնում է ինչպես ստացված դիմումների (նյութերի) հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ։

Մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության լիազորությունները, Արձանագրության 10-րդ կետի 1-3-րդ ենթակետերին համապատասխան, Հանձնաժողովն իրականացնում է սահմանված կարգով, որը հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի որոշմամբ։

Արձանագրության 13-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված է, որ Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանումը դիմումն ուսումնասիրելիս, քննություն անցկացնելիս, գործն ուսումնասիրելիս, նախազգուշացում անելու հարցը քննելիս պետական իշխանության մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, անդամ պետությունների՝ դրանց գործառույթներն իրականացնող այլ մարմիններից կամ կազմակերպություններից, իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ։

Ընդ որում, տվյալ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ հարցման հասցեատերերը պարտավոր են Հանձնաժողովին՝ նրա պահանջով սահմանված ժամկետներում, տրամադրել այն տեղեկությունները, փաստաթղթերը, տվյալները, պարզաբանումները, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովին՝ իր վրա դրված լիազորություններին համապատասխան։ Այդ պարտականությունը չկատարելը հանգեցնում է՝ ֆիզիկական անձանց, պաշտոնատար անձանց, անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց նկատմամբ տուգանքի ձեւով պատասխանատվության միջոցների կիրառմանը (Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետ)։

Հանձնաժողովի՝ անհրաժեշտ տեղեկատվության հարցում կատարելու իրավունքի վերաբերյալ նույնանման նորմեր ամրագրված են նաեւ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) այն իրավական ակտերում,

որոնք կանոնակարգում են անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) քննության, նման խախտումների վերաբերյալ քննության անցկացման եւ գործերի քննության կարգը։

3. Դիմողը նաեւ նշում է, որ Արձանագրության 10-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ գործ հարուցել մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ։

Ընդ որում, մրցակցության պաշտպանության ոլորտում Հանձնաժողովի վերահսկողական լիազորությունների իրականացման համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հունվարի 30-ի թիվ 7 որոշմամբ հաստատվել է Մրցակցության վիճակի գնահատման մեթոդիկան (այսուհետ՝ Մեթոդիկա), որը, համաձայն 2-րդ կետի «բ» ենթակետի, կիրառվում է, ի թիվս այլնի, այն փուլում, որը նախորդում է անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման հատկանիշներով քննություն անցկացնելու եւ գործ հարուցելու մասին որոշման ընդունմանը։

4. Հղում անելով Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի նորմին՝ դիմողը համարում է, որ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ Հանձնաժողովի լիազորությունը՝ խորհրդապահական (կոնֆիդենցիալ) բնույթի, հարցում կատարելու եւ ստանալու համար, համապարփակ բնույթ է կրում, քանի որ կապված չէ վերահսկողական գործառույթների իրականացման որոշակի փուլի հետ։

Դրա հետ մեկտեղ, տեղեկություններ (տեղեկատվություն) չներկայացնելու, ժամանակին չներկայացնելու կամ ակնհայտ անարժանահավատ տեղեկություններ (տեղեկատվություն) ներկայացնելու համար պատասխանատվության մասին Արձանագրության 16-րդ կետի նորմերը կրում են ընդհանուր բնույթ եւ

ձեւակերպված են առանց դիմումի ուսումնասիրության, քննության անցկացման կամ գործի ուսումնասիրության փուլերում դրանց կիրառման վերաբերյալ նշման։

Ըստ դիմողի՝ շարադրվածը հիմք է տալիս ենթադրելու, որ Հանձնաժողովը մրցակցության պաշտպանության ոլորտում լիազորություններն իրականացնելիս իրավասու է հարցում կատարելու եւ ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն՝ նախաձեռնողական կարգով (դիմումի (նյութերի) բացակայության դեպքում) մրցակցության վիճակի գնահատում իրականացնելու համար՝ մինչեւ քննության անցկացման սկիզբը։

5. Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի՝ անհրաժեշտ տեղեկատվության հարցում կատարելու լիազորությունը եւ դրան համապատասխանող՝ անձանց որոշակի շրջանակի՝ այդպիսի տեղեկատվությունը սահմանված ժամկետներում ներկայացնելու պարտականությունը նախատեսված են Արձանագրության 13-րդ կետում՝ դիմումն ուսումնասիրելիս, քննություն անցկացնելիս, գործն ուսումնասիրելիս, նախազգուշացում անելու հարցը քննելիս, դիմողը խնդրում է պարզաբանել հետեւյալը.

1) արդյո՞ք Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի եւ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներից (դրանց համակարգային փոխկապակցվածության մեջ) բխում է, որ պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց գործառույթներն իրականացնող՝ անդամ պետությունների այլ մարմիններ եւ կազմակերպությունները, իրավաբանական եւ ֆիզիկական անձինք պարտավոր են Հանձնաժողովի հարցմամբ տրամադրել Հանձնաժողովի կողմից պահանջվող տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է նրան անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության իր գործառույթն իրականացնելու համար՝ Մեթոդիկային համապատասխան սեփական նախաձեռնությամբ մրցակցության վիճակի գնահատում իրականացնելիս,

2) արդյո՞ք Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի, 16-րդ կետի եւ

Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներից (դրանց համակարգային կիրառման դեպքում)՝ հաշվի առնելով Արձանագրության 13-րդ կետի պահանջները, բխում է, որ տեղեկություններ (տեղեկատվություն) չներկայացնելու, ժամանակին չներկայացնելու, ինչպես նաեւ Հանձնաժողով ակնհայտ անարժանահավատ տեղեկություններ (տեղեկատվություն) ներկայացնելու համար իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կարող են Հանձնաժողովի կողմից ենթարկվել պատասխանատվության՝ Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան (տուգանքի նշանակում)։

II. Ընթացակարգը Դատարանում

6. Դատարանի մեծ կոլեգիայի 2026 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ՝ դիմումն ընդունվել է վարույթ։

7. Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն, որը Պայմանագրի թիվ 2 հավելվածն է (այսուհետ՝ Ստատուտ), պարզաբանման գործերով քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ)։

8. Գործը քննության նախապատրաստելու շրջանակներում Կանոնակարգի 75-րդ հոդվածով սահմանված կարգով կատարվել է լրացուցիչ տեղեկությունների եւ կարծիքների հարցում բարձրագույն դատական ատյաններից, լիազորված պետական մարմիններից, գիտական հաստատություններից, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների ձեռնարկատերերի շահերը ներկայացնող կազմակերպություններից։

Դատարանի մեծ կոլեգիան քննության է առել Հանձնաժողովի ներկայացրած նյութերը եւ Դատարանի հարցումներին ի պատասխան ստացված գրությունները Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանից, Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանից, Ղրղզստանի

Հանրապետության սահմանադրական դատարանից, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանից, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից, Բելառուսի Հանրապետության գերագույն դատարանից, Ղրղզստանի Հանրապետության գերագույն դատարանից, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանից, Բելառուսի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, Ղազախստանի Հանրապետության առեւտրի եւ ինտեգրման նախարարությունից, Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի եւ առեւտրի նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից, Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության եւ զարգացման գործակալությունից, Ռուսաստանի Դաշնության դաշնային հակամենաշնորհային ծառայությունից, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունից, «ԲՍՊ-պրոմ» բիզնեսի եւ գործատուների հանրապետական ասոցիացիայից (Բելառուսի Հանրապետություն), Արդյունաբերողների եւ գործարարների հանրապետական միությունից (Բելառուսի Հանրապետություն), Ղազախստանի Հանրապետության «Աթամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատից, Ռուսաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունից, Բելառուսի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ազգային կենտրոնից, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտից։

III. Դատարանի մեծ կոլեգիայի եզրահանգումները

9. Ստատուտի 46-րդ կետին համապատասխան՝ Դատարանն իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում։ Դատարանի կողմից պարզաբանում իրականացնելը ենթադրում է խորհրդատվական եզրակացության տրամադրում եւ անդամ պետություններին չի

զրկում միջազգային պայմանագրերը համատեղ մեկնաբանելու իրավունքից (Ստատուտի 47-րդ կետ)։

Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի դրույթների պարզաբանումը Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների կոնկրետ դրույթների բովանդակության բացահայտումը եւ իմաստի վերհանումն է։

Հաշվի առնելով դիմումի փաստարկները՝ սույն գործով պարզաբանման են ենթակա Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի, Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի, 13-րդ եւ 16-րդ կետերի դրույթները՝ դրանց համակարգային փոխկապակցվածության մեջ՝ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ անդրսահմանային շուկաներում մրցակցության վիճակի գնահատման լիազորություններն իրականացվելիս դրանց կիրառելիության տեսանկյունից։

10. Ղեկավարվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան իրականացնում է Պայմանագրի դրույթների պարզաբանումը՝ կիրառելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներն ու նորմերը, Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը եւ այլ միջազգային պայմանագրեր, որոնց մասնակից են անդամ պետությունները, Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները։

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ հաշվի առնելով պայմանագրի օբյեկտը եւ նպատակները։

11. Ինչպես բխում է Պայմանագրի 1-ին հոդվածից՝ ԵԱՏՄ-ն հիմնադրվել է որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային

կազմակերպություն, որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը տնտեսության այն ճյուղերում, որոնք սահմանված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով։

Ընդ որում, անդրսահմանային շուկաներում մրցակցության պաշտպանության ոլորտի կանոնները կանոնակարգված են Միության իրավունքով եւ դասվում են միասնական քաղաքականության ոլորտին, ինչը, Պայմանագրի 2-րդ հոդվածին համապատասխան, նշանակում է միասնականացված իրավական կարգավորման առկայություն (թիվ R-1/17 գործով 2017 թվականի ապրիլի 4-ի Խորհրդատվական եզրակացության 1-ին կետ)։

12. Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ Միության մարմինները գործում են այն լիազորությունների շրջանակներում, որոնք նրանց վերապահված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով։

Պայմանագրի 18-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ ԵԱՏՄ մարմին համարվող Հանձնաժողովի լիազորությունները սահմանվում են Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն։ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված՝ համապատասխան ոլորտներում լիազորությունների սահմաններում՝ ներառյալ մրցակցային քաղաքականությունը։

Ստատուտի 42-րդ կետին համապատասխան՝ Դատարանի իրավասության մեջ չի մտնում Միության մարմիններին Պայմանագրով եւ (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով ուղղակիորեն նախատեսված իրավասություններից բացի լրացուցիչ իրավասություններով օժտելը։

13. Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն օժտված է Պայմանագրի XVIII բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման իրավունքով՝ Պայմանագրով սահմանված դեպքերում, Պայմանագրի թիվ 19 հավելվածով նախատեսված կարգով:

Նշված հավելվածն ընդունվել է Արձանագրության ձեւով, որի 10-րդ կետում կանոնակարգված են Հանձնաժողովի լիազորությունները՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս (բացառությամբ այն խախտումների, որոնք բացասական ազդեցություն են ունենում անդրսահմանային ֆինանսական շուկաներում մրցակցության վրա, որոնց կանխումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան):

Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովն օժտված է՝ պետական իշխանության մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, իրենց գործառույթներն իրականացնող՝ անդամ պետությունների այլ մարմիններից եւ կազմակերպություններից, իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից տեղեկատվության հարցում կատարելու եւ ստանալու լիազորություններով, այդ թվում՝ այնպիսի գաղտնի տեղեկատվության, որն անհրաժեշտ է անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանումը վերահսկելուն ուղղված լիազորությունները կատարելու համար:

Այդ լիազորություններն ամրագրված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 23-ի հետեւյալ որոշումներում. թիվ 97՝ «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) ուսումնասիրության կարգի մասին», թիվ 98՝ «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննության անցկացման կարգի մասին», եւ թիվ 99՝ «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննության կարգի մասին», ինչպես նաեւ

նախկինում հաստատվել են Դատարանի պրակտիկայում (թիվ C-6/23 գործով Դատարանի կոլեգիայի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման 5.6 կետ, թիվ C-7/23 գործով Դատարանի կոլեգիայի 2024 թվականի փետրվարի 5-ի որոշման 5.3 կետ)։

Դրա հետ մեկտեղ, Արձանագրության III բաժնի («Մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը») դրույթների եւ Արձանագրության 11-րդ կետին համապատասխան ընդունված իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ խախտումների կանխման Հանձնաժողովի լիազորություններն ինքն իրականացնում է տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), ինչպես նաեւ անդամ պետությունների ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպությունների նկատմամբ՝ վերահսկողության կանոնակարգված մեխանիզմների շրջանակներում, որն իրականացվում է համապատասխան փուլերում Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտի, գործի քննության հարցերով հանձնաժողովի, Հանձնաժողովի կոլեգիայի անդամի եւ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից (թիվ C-4/23 գործով Դատարանի կոլեգիայի 2023 թվականի հունիսի 15-ի որոշման 5.2 կետ)։

Ընդ որում, Հանձնաժողովի համապատասխան լիազորությունների իրավական կանոնակարգումն ունի առանձնահատկություններ՝ հաշվի առնելով վերահսկողության իրականացման փուլերը։

2023 թվականի մայիսի 25-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության 1-ին հոդվածի 13-րդ կետով Արձանագրության 13-րդ կետի առաջին պարբերությունը լրացվել է նշումով այն մասին, որ տվյալ դեպքում համապատասխան հարցումը համարվում է ուղարկված Հանձնաժողովի անունից։

Հաշվի առնելով հատուկ նորմի առկայությունը (Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետ), որը նախատեսում է պատասխանատվություն՝ Հանձնաժողովի հարցումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, դրա գործողության տարածումը վերահսկողության այլ փուլերի եւ(կամ)

մեխանիզմների վրա, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացվող մրցակցության վիճակի գնահատման նկատմամբ, չի համապատասխանում Միության իրավունքի նորմերին եւ կարող է հանգեցնել Արձանագրության 16-րդ կետում նախատեսված անձանց լայն շրջանակի իրավունքների սահմանափակմանը։

14. Ուսումնասիրելով դիմումի փաստարկներն առ այն, որ Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված՝ տեղեկատվության հարցում կատարելու Հանձնաժողովի իրավունքին համապատասխանում է դրա տրամադրման պարտականությունը, Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ իրավահարաբերության կողմերի սուբյեկտիվ իրավունքները եւ պարտականությունները, որոնք դրա կառուցվածքի բովանդակային տարրն են, միշտ չէ, որ ապահովվում են հարկադրանքի միջոցներով։

Իրավական պարտականությունների դրման եւ դրանց կատարումն ապահովելուն ուղղված հարկադրանքի միջոցների (այդ թվում՝ տուգանքի ձեւով սանկցիաների) կիրառման հարցերը պետք է ուղղակիորեն եւ միանշանակ կարգավորված լինեն Պայմանագրում կամ Միության շրջանակներում այլ միջազգային պայմանագրերում։

Իրավախախտման որոշման եւ պատասխանատվության սահմանման սկզբունքը բացառապես իրավական նորմի հիման վրա (nulla poena sine lege certa), որը ներդրված է ժամանակակից պետահիրավական համակարգերի մեծ մասում որպես իրավունքի գերակայության հիմնարար պահանջ, ամրագրված է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածում, որի մասնակից են Միության բոլոր անդամ պետությունները, ինչպես նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետում (ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին)։

Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց պատասխանատվությունը՝

Հանձնաժողով տեղեկություններ (տեղեկատվություն) չներկայացնելու կամ ժամանակին չներկայացնելու, ինչպես նաեւ Հանձնաժողով ակնհայտ անարժանահավատ տեղեկություններ (տեղեկատվություն) ներկայացնելու համար, նախատեսված է Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետում, որը չի պարունակում հստակ ձեւակերպված նշում, թե հատկապես Հանձնաժողովի որ հարցումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մեջ է արտահայտվում իրավախախտման օբյեկտիվ կողմը: Տվյալ հանգամանքը գնահատելիս Դատարանի մեծ կոլեգիան հաշվի է առնում Արձանագրության 13-րդ կետի նորմը, որը սահմանում է հարցումների առանձին տեսակները որպես Հանձնաժողովի հարցումներ, ինչպես նաեւ Արձանագրության 10-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված՝ տեղեկատվության հարցում կատարելու եւ ստանալու Հանձնաժողովի իրավունքի իրացման մեխանիզմի բացակայությունը՝ Արձանագրության մեջ:

Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ մրցակցության վիճակի գնահատման հետ կապված՝ դրա հարցման չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հարցման հասցեատիրոջ համար չի առաջացնում Արձանագրության 16-րդ կետով նախատեսված պատասխանատվություն (տուգանք), սակայն կարող է հանգեցնել այլ հետեւանքների, օրինակ՝ կապված Հանձնաժողովի նախաձեռնությամբ մրցակցության ընդհանուր կանոնների խախտման քննություն անցկացնելու մասին որոշման ընդունման հետ:

15. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ հակամենաշնորհային օրենսդրության խախտման հնարավոր հատկանիշներն ինքնուրույն բացահայտելու իրավունքը՝ բոլոր անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ, պատկանում է հակամենաշնորհային մարմիններին: Հանձնաժողովի նույնանման լիազորությունն իր արտացոլումն է գտել Արձանագրության 10-րդ կետի 2-րդ ենթակետում, ինչպես նաեւ Մեթոդիկայի 2-րդ կետի «բ» ենթակետում, ըստ որի՝ այն կիրառվում է Հանձնաժողովի կողմից նաեւ սեփական նախաձեռնությամբ՝ Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ մինչեւ

քննությունների անցկացման սկիզբը՝ իր լիազորություններն իրականացնելու նպատակով։

Դրա հետ մեկտեղ, դիմումի փաստարկները՝ Մեթոդիկայի նշված նորմին հղումով, ենթակա են գնահատման՝ հաշվի առնելով Պայմանագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ Միության իրավունքի ակտերի հիերարխիան։ Դատարանի մեծ կոլեգիան, սույն գործի շրջանակներում չքննարկելով Մեթոդիկայի համապատասխանությունը Պայմանագրին, նշում է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 115 որոշմամբ՝ դրա գործողության տարածումը մինչեւ քննությունների սկիզբը՝ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացվող լիազորությունների նկատմամբ, չի կարող հիմք հանդիսանալ Պայմանագրի եւ Արձանագրության դրույթների մեկնաբանման համար։

16. Դատարանի մեծ կոլեգիան վերոշարադրյալի հիման վրա ներկայացնում է հետեւյալ պարզաբանումները՝

Միության իրավունքը չի սահմանափակում Հանձնաժողովի լիազորությունները՝ ուղարկելու համապատասխան հարցումներ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ մրցակցության վիճակի գնահատում իրականացնելիս։

Դրա հետ մեկտեղ, Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի, Արձանագրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի, 16-րդ կետի դրույթներից (դրանց համակարգային կիրառման դեպքում)՝ հաշվի առնելով Արձանագրության 13-րդ կետի պահանջները, բխում է, որ Հանձնաժողով տեղեկություններ (տեղեկատվություն) չներկայացնելու, ժամանակին չներկայացնելու համար իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կարող են Հանձնաժողովի կողմից ենթարկվել պատասխանատվության՝ Արձանագրության 16-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան (տուգանքի նշանակում) միայն դիմումի ուսումնասիրության, քննության անցկացման, գործի ուսումնասիրության, նախազգուշացում անելու հարցը քննելու շրջանակներում, երբ նման

տեղեկություններ (տեղեկատվություն) ներկայացնելը նրանց վերագրված է որպես պարտականություն՝ Միության իրավունքով։

IV. Եզրափակիչ դրույթներ

17. Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին։

18. Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում։

Նախագահող՝	Ա.Ա. Դրոնով
Դատավորներ՝	Է.Վ. Հայրիյան
	Դ.Պ. Ալեքսանդրով
	Կ.Կ. Ջունուշպաեւ
	Ա.Ա. Զաբարա
	Ե.Ժ. Իսմայիլով
	Մ.Տ. Կայիպով
	Ա.Բ. Կիշկեմբաեւ
	Ն.Վ. Պավլովա
	Ա.Գ. Թունյան